Արձանագրություն N 2
«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/30» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

07.02.2023թ.
Ժամը՝ 16:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Մանուկյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Հովհաննիսյան, Լ. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Թ.Կարապետյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/30» ծածկագրով գնման ընթացակարգին պարզաբանման մասին հայտարարություն

(Մ. Մանուկյան)

Հարգելի գործընկեր, ի պատասխան Ձեր պարզաբանման հարցմանը՝

«Մեր ընկերությունն իրականացնում է դիսպենսերի միջոցով օգտագործվող 19 լ տարողությամբ ջրերի արտադրություն: Հանդիսանալով բազմաթիվ պետական և մասնավոր հիմնարկ-ձեռնարկությունների մատակարարը և վստահելի գործընկերը՝ ցանկանում ենք մասնակցել նաև սույն մրցույթին, որի համար խնդրում ենք պարզաբանել հետևյալ հարցերը: 1. Սահմանված պահանջի համաձայն մատակարարումը պետք է կատարվի մեկանգամյա օգտագործման տարաներով: Մեր ընկերությունը, ինչպես նաև շուկայի գերակշիռ մասը կազմող մյուս ընկերությունները իրենց արտադրությունը կազմակերպում են բազմակի օգտագործման տարաներում, որը համահունչ է ՀՀ կառավարության կողմից կիրառվող և լայնորեն քարոզվող՝ մեկանգամյա պլաստիկի ծավալների նվազեցման ռազմավարությանը, ինչպես նաև մեր ընկերության սոցիալական քաղաքականությանը: Նման պահանջի սահմանումը ստեղծում է շուկայի մուտքի խոչընդոտ մեզ համար և անհավասար մրցակցային պայմաններ: Ի դեպ Երևանի Քաղաքապետարանի կողմից հայտարարված վերջին գնանշման հարցմամբ (ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/10) մեկանգամյա տարաների պահանջ սահմանված չէ, ինչը ևս փաստում է նման պահանջի հիմնազուրկ լինելու վերաբերյալ: Ելնելով վերոգրյալից խնդրում ենք պարզաբանել, արդյոք կարող են բազմակի օգտագործման տարաներով մատակարարող ընկերությունները ևս մասնակցել սույն մրցույթին:

Հայտնում ենք՝

Ի պատասխան Ձեր կողմից պահանջված պարզաբանման, տեղեկացնում ենք, որ Երևանի քաղաքապետարանը որպես պատվիրատու իրեն վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան հայտարարել է ըմպելի ջրի գնման ընթացակարգ: Առաջարկում ենք, առաջնորդվել հրավերով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրով, որը չի հակասում գնումների մասին ՀՀ օրենսդրությանը և որը համապատասխանում է գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպմանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3 դեմ - 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Մ. Մանուկյան

Հանձնաժողովի անդամներ՝ ---------- Հ. Հովհաննիսյան

---------- Լ. Գրիգորյան

Քարտուղար՝ ---------- Թ. Կարապետյան